Հավելված
ՀՀ կառավարության 2017 թվականի
հունիսի 1-ի N 586 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ԴՐԱՆՑ ՀԱՎԱՍԱՐԵՑՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների, դրանց հավասարեցված միջազգային կազմակերպությունների (այսուհետ՝ դիվանագիտական ներկայացուցչություններ) ցանկերը և դրանցում կատարվող փոփոխությունները հարկային մարմին ներկայացնելու հետ կապված հարաբերությունները:

2. Դիվանագիտական ներկայացուցչությունների ցանկերը (այսուհետ՝ ցանկեր) և դրանցում կատարվող փոփոխությունները հարկային մարմին է ներկայացնում Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը:

3. Ցանկերը ներառում են յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ի դրությամբ դիվանագիտական ներկայացուցչությունների անվանումները:

4. Ցանկերում կատարվող փոփոխությունները ներառում են այդ ցանկերում արդեն ներառված տվյալների հետ կապված փոփոխություններն ու լրացումները:

5. Ցանկերը և դրանցում կատարվող փոփոխությունները հարկային մարմին են ներկայացվում էլեկտրոնային եղանակով՝ փաստաթղթաշրջանառության (Mulberry) կամ այլ

համակարգի միջոցով՝ համապատասխան համակարգչային ծրագրի ձևաչափով (Microsoft Excel):

6. Յուրաքանչյուր տարվա համար ցանկերը սույն կարգին կից N 1 ձևին համապատասխան ներկայացվում են մինչև տվյալ տարվա հունվարի 15-ը ներառյալ:

7. Յուրաքանչյուր տարվա համար ներկայացված ցանկերում կատարվող փոփոխությունները սույն կարգին կից N 2 ձևին համապատասխան ներկայացվում են յուրաքանչյուր փոփոխության կամ լրացման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ
ՏԵՂԱԿԱԼ Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ձև N 1

Ց Ա Ն Կ

20__ ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ԴՐԱՆՑ ՀԱՎԱՍԱՐԵՑՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

NN ը/կ	Դիվանագիտական ներկայացուցչություններն ըստ բաժինների (դեսպանություններ, հյուպատոսություններ, ներկայացուցչություններ և այլն)	Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության նկատմամբ փոխադարձաբար ԱԱՀ-ի 0 տոկոս դրույքաչափ կիրառելու վերաբերյալ նշում (✓)
1	2	3
1.		
1)		
2)		
2.		
1)		
2)		
…		

Ձև N 2

Փ Ո Փ Ո Խ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

20__ ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ԴՐԱՆՑ ՀԱՎԱՍԱՐԵՑՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԵՐԻ

NN ը/կ	Փոփոխված կամ լրացվող դիվանագիտական ներկայացուցչություններն ըստ բաժինների (դեսպանություններ, հյուպատոսություններ, ներկայացուցչություններ և այլն)	Փոփոխության կամ լրացման նկարագրությունը
1	2	3
1.		
1)		
2)		
2.		
1)		
2)		
…		